զընկացին աւելացնում է և այն թէ «յերիս տեղիս ի քեզ կազմեալ շինեցաւ շիրիմ Հանգստարանի և սուրբ մարմնոյ նշխարաց տեղի և տապան գերեզմանի։» Աչքի առաջ ունենալով, որ Երզնկացու յիշած այս երեք շիրիմներից մէկը Թորդանումն է և միւսը Մանեայ Այրի մօտ այն գարակը, որի վերայ Դրասխանակերտցու հրամանով եկեղեցի շինուեցաւ և այժմ Հանգիստ Ս. Լուսաւորչի է կոչվում, մնում է որոշել երրորդ շիրմի տեղը, որ մեզ անծանօթ է։ Սեպուհի ստորոտներում քսան և չորս վանք է եղել, որոնք այժմ գրեթէ ամայի են և մեծ մասը կիսակործան. նոցա մէջ առաջին և նշանաւոր տեղը բռնում է Աւագ վանքը, որ հիմնել է, ըստ աւանդութեան, Ս. Թադէոս առաքեալն և ընդարձակել է Ս. Գրիգոր. այդ վանքի եկեղեցիներից մէկը կոչւում է Ս. Լուսաւորիչ. բացի այդ Երիզայի մօտերը կայ Զարչարանաց Ս. Լուսաւորչի կամ Տատասկի վանք, որտեղ պահւում էին նորա տանջանաց գործիքներից մի մաս՝ այն է երկաթէ տատասկներ, որոնցից երկուսը կան և Ս. Էջմիածնի մասունքների մէջ *. գուցէ այս վանքերից մէկում ևս պահուել է Ս. Լուսաւորչի անունով մի շիրիմ։ Այդ զանազան շիրիմներն, անշուշտ, ժամանակի ընթացքումն են յառաջ եկել իբրև ուխտատեղեր. այդ մի սովորական երևոյթ է Հայաստանի շատ

* Շահխաթ. Ա. 73։